ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Նաիրա Գրիգորյան, ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2025 թվականի փետրվարի 24-ից մինչև փետրվարի 28-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.

Կլիմայական գործողությունների կարողությունների կոալիցիա (C3A)/Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Կանաչ զարգացման միջազգային ուղղությունների գնահատում և կառավարում (Workshop on Assessing and Managing the International Dimensions of Green Development)» թեմայով աշխատաժողովին

5. Քննարկված թեմաները.

1) Կանաչ անցման հնարավորություններն ու մարտահրավերները ֆինանսների նախարարությունների համար
2) Կլիմայի ազդեցությունը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի զարգացման վրա և հարմարվողականության պատրաստվածությունը
3) Միջին անցման փուլում կողմնորոշում. նոր առաջացող թեմաներ և մարտահրավերներ
4) Էներգետիկ անցման հնարավորությունների օգտագործում
5) Կանաչ նորարարություն և անցում ցածր ածխածնային տնտեսության
6) Արդյունավետ անցման համար քաղաքականությունների ուղղորդման շրջանակներ
7) Կանաչ անցում և աշխատատեղեր Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում. հնարավորություններ և մարտահրավերներ

8) Աճխաճնի սահմանային ճշգրտման մեխանիզմ, դրա դերը կանաչ արդյունաբերական քաղաքականություններում
9) Աճխաճնի գնագոյացումը և միջազգային մրցունակությունը կանաչ արդյունաբերական քաղաքականության մեջ
10) Հանրային ֆինանսական կառավարումը կլիմայական գործողությունների համար
11) Կանաչ տնտեսության անցմանն ուղղված ֆինանսավորման ռազմավարություններ
12) Կանաչ տնտեսության անցման համար նպաստավոր միջավայրի ստեղծում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովին ներկա են գտնվել 13 երկրների 32 մասնակիցներ: Աշխատաժողովի ընթացքում Համաշխարհային բանկի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են ինտերակտիվ քննարկումներ, նաև տարբեր երկրների մասնակիցներ ներկայացրել են շնորհանդես՝ այդ թեմաների շրջանակներում իրենց երկրում առկա խնդիրների, զարգացումների վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Գործուղվող՝

ՀՀ ֆինանսների նախարարության
պետական պարտքի կառավարման
վարչության հաշվառման և սպասարկման
բաժնի գլխավոր մասնագետ

Նաիրա Գրիգորյան

05.03.2025թ.